

ՄԵԼԳՈՆԵԱՆ՝ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՐԲՆՈՅԸ

Posted on March 3, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացումի «Կոչ, Բաց Նամակ»ին Առիթով

Վարդգես Գուրուեան, Լոս Անճելըս, 14 Փետրուար 2014

Վերջերս խումբ մը Մելգոնեանցիներ «Կոչ-Բաց Նամակ»ով մը դիմում կատարեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որպէսզի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբացուի գլխաւորաբար Սուրիահայ պատանիներու համար: Որպէս արձագանգ այդ նամակին, հարիւրաւոր Մելգոնեանցիներ եւ ոչ Մելգոնեանցիներ աշխարհի զանազան անկիւններէն զորավիզ կանգնեցան այդ «Կոչ»ին: (Այցելել www.melkonianforever.org կայքը)

Այդ «Կոչ-Բաց Նամակ»ին հեղինակներուն միտքին մէջ մէկէ աւելի պատճառներ կային Մելգոնեանը վերաբացուած տեսնելու:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացումի «Կոչ, Բաց Նամակ»ին Առիթով

Վարդգես Գուրուեան, Լոս Անճելըս, 14 Փետրուար 2014

Վերջերս խումբ մը Մելգոնեանցիներ «Կոչ-Բաց Նամակ»ով մը դիմում կատարեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որպէսզի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբացուի գլխաւորաբար Սուրիահայ պատանիներու համար: Որպէս արձագանգ այդ նամակին, հարիւրաւոր Մելգոնեանցիներ եւ ոչ Մելգոնեանցիներ աշխարհի զանազան անկիւններէն զորավիզ կանգնեցան այդ «Կոչ»ին: (Այցելել www.melkonianforever.org կայքը)

Այդ «Կոչ-Բաց Նամակ»ին հեղինակներուն միտքին մէջ մէկէ աւելի պատճառներ կային Մելգոնեանը վերաբացուած տեսնելու:

Բնականաբար առաջին պատճառը Սուրիահայ, բայց մանաւանդ Հալէպահայ մեր զաւակներուն ապահով միջավայր փոխադրել եւ որակաւոր ուսում հայթայթելն էր:

Սօտ երեք տարիներէ ի վեր շարունակուող Սուրիոյ ահաւոր «քաղաքացիական» պատերազմը տակաւին շատ հեռու է իր աւարտին հասնելէ: Ծայրայեղ իսլամական խմբաւորումները, ինչպիսին են «Ալ-Նուսրա», «ԻՍԻՍ» (Islamic State of Iraq and the Levant), «Ահրար Էլ Շամ» (Ahrar al Sham), «Էլ Թաուհիտ» (Al-Tawheed) եւ այլք, գլխաւորութեամբ «Էլ Քայիտա»յի, ծրագրած են իբր թէ ծայրայեղ իսլամական պետութիւն մը հիմնել Քուրանի - Շարիայի շատ խիստ եւ պահպանողական օրէնքներով:

Այս ծայրայեղականները ոչ մէկ յարգանք ունին քրիստոնեայ փոքրամասնութիւններու հանդէպ: Եկեղեցիները կը պղծուին, կը կողոպտուին, կը քանդուին, անմեղներ կը գլխատուին, մանուկներ կ'առեւանգուին, կը պղծուին, հազարաւորներ կը սպաննուին, մինչ քրիստոնեայ եւրոպան եւ Ամերիկան կոյր եւ խուկ կը ձեւանան...(Կը յիշէ՞ք Հայկական ջարդերը...)

Ըստ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան տեղեկագրութիւններուն, Սուրիոյ մէջ, ինչպէս նալել գաղթակայաններուն, վարակիչ հիւանդութիւնները ահաւոր չափերու հասած են: Այսպէս, հարսանիթ, թիֆոյիտ, լերդաբորբ, թանչախտ, հիւծախտ, տիֆթերիա, կապոյտ հազ (measles, typhoid, hepatitis, dysentery, tuberculosis, diphtheria, whooping cough) եւ այլ հիւանդութիւններ աւերներ կը գործեն մանաւանդ երեխաներուն եւ պատանիներուն մէջ:

Հալլէպի շատ մը շրջաններուն մէջ ջուրի ահաւոր պակասը կայ: Յաճախ երեխաներ անօթի կը պառկին, երբեմն քանի մը օր: Շատ դէպքեր պատահած են որ այդ երեխաները անօթի մեռնին:

Բազմաթիւ հայկական եկեղեցիներ քանդուած են: Բազմաթիւ դպրոցներ ծանր վնասներու ենթարկուած են: Բազմաթիւ հայապատկան տուններ, ակումբներ, խանութներ, հաստատութիւններ աւերուած են: Հալլէպ մնացած հայերը կ'ապրին որեւէ ատեն սպաննուելու, առեւանգուելու վտանգին տակ: Այս ահաւոր պայմաններուն տակ տակաւին կարգ մը դպրոցներ բաց են եւ քէշ-աղէկ կ'աշխատին:

Հայ պատանիները, մեր երեխաները, այսպիսի ահաւոր պայմաններու մէջ կ'ապրին եւ կ'ուսանին:

Տակաւին, քանի մը օր առաջ Միացեալ Ազգերու կողմէ հրատարակուած մէկ տեղեկագրութեան մէջ կը կարդայինք թէ ինչպէս Սուրիացի մանուկներ եւ պատանիներ կ'առեւանգուին, չարչարանքներու եւ սեռային բռնաբարումներու կ'ենթարկուին: Երկու կողմերն ալ պարտադիր կը զինուորագրեն պատանիները եւ զանոնք կը գործածեն ինքնասպանական գործողութիւններ կատարելու կամ որպէս մարդկային պատնէշ: ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղար Պէն Քի-մունը կ'ըսէ թէ «Սուրիացի մանուկները կ'ենթարկուին անպատմելի տառապանքներու, տանջանքներու,» եւ կողմերէն կը պահանջէ «անյապաղ միջոցներ ձեռնարկել Սուրիացի մանուկներուն մարդկային իրաւունքները պաշտպանելու եւ յարգելու: »

Երկու կողմերն ալ առեւանգուած պզտիկները ենթարկած են ծեծի, մետաղեայ եւ փայտեայ գաւազաններով եւ խարազաններով, ելեքտրական հոսանքի ցնցումներու, սեռային բռնաբարումներու, սիկարեթով այրելու, օրերով անօթի, ծարաւ եւ անքուն պահելու չարչարանքներուն, եւայլն:

Նկատի ունենալով որ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը կրնայ շուրջ հազար (1000) աշակերտի ապահով պատսպարան հայթայթել, Կոչ-Բաց Նամակով մը դիմում կատարուեցաւ Հ.Բ.Ը.Միութեան որ վերաբանայ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Մելգոնեանի մէջ հայ պատանիները ոչ միայն ապահով պիտի ըլլան, այլ նաեւ ստանան սնունդ, բժշկական խնամք, եւ բարձրորակ ուսում: Անոնք հեռու պիտի ըլլան մահուան ճիրաններէն, հոգեկան ահաւոր ցնցումներէ: Անոնք մօտ պիտի մնան իրենց ծննդավայրին, եւ երբ օրը գայ, պիտի կարենան վերադառնալ ու վերաշինել իրնց հայրերուն տունները, վերաշինել դպրոցներն ու եկեղեցիները, ակումբներն ու արհեստանոցները:

Չեմ գիտեր քանի՞ հազար Սուրիահայ գաղթականներ կան Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Թուրքիոյ թէ այլ գաղթակայաններու մէջ: Մելգոնեանի վերաբացումով կարելի պիտի ըլլայ նաեւ այս

գաղթականներն հարիւրաւոր պատանիներ փրկել եւ անոնց ծնողները ահաւոր մղձաւանջներէ ազատել: Կարդացած էք անշուշտ որ այս գաղթականներն հարիւրաւոր, հազարաւոր պատանիներ պարտադրաբար կը զինուորագրուին «ընդդիմադիր» կողմերն եւ շատ կարճ զինավարժութիւններէ ետք կը դրկուին ճակատ: Արդեօք քանի՞ հայ պատանիներ զոհ գացած են այս ճիւղային ծրագրին, չեմ գիտեր:

Տակաւին, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը պիտի վերածուի **Արեւմտահայերէնի ամրոց - դարբնոցի**: Այսօր ամեւտահայերէնը գահավիժումի մէջ է եւ գրեթէ մահամերձ է: Արտասահմանի մէջ չկայ դպրոց մը, որ կարենայ վերականգնել արեւմտասայ լեզուն: Հայաստանի համալսարաններու մէջ հաւանաբար քանի մը հոգի սերտեն արեւմտահայերէնը, բայց անոնք արեւմտահայ չեն: Արեւմտահայերու պատմութիւնը տարբեր է արեւելահայերու պատմութենէն: Արեւմտահայերու գրականութիւնը, մշակոյթը, մտածելակերպը, հոգեբանութիւնը, լեզուամտածողութիւնը, լեզուին զարգացման փուլերը, քերականութիւնը, ուղղագրութիւնը եւ բազմաթիւ այլ ազդակներ այնքան տարբեր են որ արեւելահայը չի կրնար քանի մը հոգիով տեր կանգնիլ արեւմտահայ լեզուին: Այս հարցին մասին տակաւին կարելի է շատ անելի խորանալ եւ զայն անելի պարզաբանել, բայց այս յօդուածի սահմաններէն դուրս կ'իյնայ այդ:

Երեւակայեցէք պահ մը: Ծուրջ հազար արեւմտահայ աշակերտ, գիշերօթիկ վարժարանի մէջ, պատրաստուած, կարող, նուիրեալ եւ արեւմտահայերէնով մտահոգ ուսուցիչներու խնամքին տակ, ճոխ գրադարանով, արեւմտահայերէն լեզուն լաւ սորվելու, վերականգնելու նպատակասլաց կրթութիւն ստանան: Կրթական միւս ոլորտները երբեք տուժելու պետք չունին: Պարզապէս օգտուելով Մելգոնեանի գիշերօթիկ ըլլալու հանգամանքէն, հրաշքներ կարելի է գործել: Զմոռնանք որ այս աշակերտները «պատանդ» են, այսինքն երթալիք տեղ չունին, հետեւաբար տրամադիր պիտի ըլլան բարձր կարգապահութեամբ լաւ ուսանելու, մանաւանդ սիրով հրամցուած արեւմտահայերէնը:

Այս առիթով, ապահով միջավայր պիտի ստեղծուի նայել Հալեպահայ բազմաթիւ հայերէնի ուսուցիչներու...

Մելգոնեանէն շրջանաւարտ աշակերտները պատրաստ պիտի ըլլան նաեւ բեմական եւ ազգայն կեանքին: Գիշերօթիկի հանգամանքով, Մելգոնեանցիները գրեթէ ամէն շաբաթ մշակութային, գրական, թատերական, երաժշտական եւ այլ գեղարուեստական երեկոյթներով վարժ պիտի ըլլան նման ձեռնարկներ կազմակերպելու, մշակութային կեանքը զարգացնելու իրենց համայնքներէն ներս: Եթէ նայինք քառասունական թուականներէն մինչեւ իննիսունական թուականներու մեր գաղութներուն ազգային - մշակութային կեանքին, հոն պիտի տեսնենք Մելգոնեանցիներու գերակշռութիւնը: Եւ ասիկա կ'ըսեմ ոչ թէ յոխորտալով, այլ որպէս պարզ փաստ: Համեստօրէն հպարտ ենք որ Մելգոնեանցիներս մեր համայնքներուն մէջ առաջնորդի դիրքերու վրայ էինք եւ ենք տակաւին: Բարեգործականի, կուսակցութիւններու, միութիւններու, եկեղեցիին եւ քիչ մը ամէն տեղ պիտի հանդիպիք Մելգոնեանցիներու ազգային ծառայութեան մէջ, արհեստավարժ (ուսուցիչ, տնօրէն, խմբագիր եւայլն) թէ կամաւոր ծառայող (հոգաբարձու, ծխական խորհուրդի անդամ, միութենական վարչական եւայլն): Վաղը, այսօրուան մեր Սուրիացի պատանի-Մելգոնեանցիներ պիտի մեծնայ եւ գաղութներու մէջ ստանձնէ առաջնորդի դիրքեր:

Կարելի է տակաւին շատ խօսիլ Մելգոնեանը վերաբանալու հրամայական անհրաժեշտութեան եւ բազմաթիւ ազգօգուտ նպատակներու մասին: Պարզապէս յիշենք տակաւին որ նիւթականն ալ հարց չէ եւ չի կրնար ըլլալ: Քանի՞ տուարի փոխարէն կը համաձայնէիք ձեր զաւակը կամ թոռնիկը ազատել գլխատումէ...Քանի՞ տուար պիտի վճարէիք ձեր զաւակը առեւանգիչ – բռնաբարողներու ձեռքէն ազատելու...Բարեգործականի ղեկավարները գիտեն որ դրամը կայ: **Անհրաժեշտ է զայն գործածել հազարաւոր պատանիներ փրկելու, կրթելու եւ ազգին նուիրելու:**

Անձկութեամբ կը սպասենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան **դրական պատասխանին:**

